Հայկազեանս սեաւի լեր ի միշտ խնամատար.
ով մայր Մեսիայի, կոյս անապական։

Տապանակ ոսկեղէն բանին բնակարան,
լուսածին ամպ թեթեւ հերքիչ մթութեան.
ընդդէմ պատերազմի, դու անբեկ վահան,
ով մայր Մեսիայի, կոյս անապական։

Էիցս էակին անբիծ բնակարան,
կենսաբաշխ սուրբ հացին ընտիր ըշտեմարան,
ծրիապէս շնորհօղ մերոյս բնութեան.
ով մայր Մեսիայի, կոյս անապական։

(Մոդրն. Մխիթ. Վիեննա, Թ. 157, Թղ.
1ա—2ա. Սկզբնագիրք՝ "ի Կարապետէ,,։)

## Ձ.

Գովեստ աշխարհախառն ի սուրբ Աստուածածնի տաճարն մայրանուամբ Կարմիր վանք եւ Հնձուց կոչեցեալն, տաղաչափական արհեստիւ շինեալ իբրու յատուկ գեղեցիկ գովով. Կարապետ փշուն եղեալ կողմանց եւ սորին առաջնորդին Թոխանի, գեղջին Հնձուց։

Ի կարմրագոյն քարանց յօրինակերտեալ,
տաճար չքնաղ զարմանահրաշ եւ օրհնեալ.
Հնձուց վանք դու մականուամբ վերածայնեալ.
արի արի արի սէր իմ գիս փրկեայ։

Կերտեալ զբմպէթք խնամոց վերնոյն եւ ես է.
յօրինեցար մեծէն սրբոյն Ներսէսէ.
մինչ ի վախճան զքեզ Տէր անխախտ պահեսցէ.
արի արի արի սէր իմ գիս։

Աւաղելով զնղճուկ հոգիս կարի լամ.
շնորհաց վեհիդ անմիջապէս յոյժ ըղձամ.